ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. ապրիլի 29-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցը:

Կոմիտեն, ղեկավարվելով Կանոնակարգի 2-րդ հոդվածի 2.01 կետով 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **25.04.2022թ. «ԲԿՄԱ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-142) հանդիպման ժամանակ «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստներից մի քանիսի մարզաշապիկներին առկա չէր VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի լոգոն:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 72-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա Ֆուտբոլային Ակումբ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով։

2. **21.04.2022թ. «Դովեղ-09»-«Բենտոնիտ1-09» (13Մ1-042) հանդիպման ժամանակ, «Բենտոնիտ1-09» թիմի կազմում հանդես է եկել բարձր տարիքային խմբի ֆուտբոլիստ։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բենտոնիտ1-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 36-րդ կետը՝ «Բենտոնիտ1-09» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Բենտոնիտ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։

3. **06.03.2022թ. «Լեռնային Արցախ աղջիկներ»-«Ալաշկերտ-աղջիկներ» (ԿԱԽ-041) կանանց ֆուտբոլի առաջին խմբի 2021/22 մրցաշրջանի առաջնության հանդիպմանը «Ալաշկերտ-աղջիկներ» թիմը չի ներկայացել խաղին։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ-աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Ալաշկերտ-աղջիկներ» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով։

4. **10.04.2022թ. «Ակադեմիա-04»-«Արարատ-Արմենիա-04» (18Ա-059) հանդիպման ժամանակ, «Ակադեմիա-04» թիմի կազմում հանդես է եկել որակազրկված ֆուտբոլիստ։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ակադեմիա-04» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 36-րդ կետը՝ «Ակադեմիա-04» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով։

5. **28.04.2022թ. «Ուրարտու-02-09»-«Դովեղ-09» (13Մ1-047) հանդիպմանը «Դովեղ-09» թիմը չի ներկայացել խաղին։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Դովեղ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Դովեղ-09» թիմի նկատմամբ կիրառել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Դովեղ ՖԱ ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

6. **«ՊԵԿ Արիմիության» դիմումի քննարկում. հրաժարվել է ՀՀ ֆուտբոլի 2021/2022 մրցաշրջանի Սիրողական Ա լիգայի առաջնության հետագա մասնակցությունից:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «ՊԵԿ Արիմիության» կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՊԵԿ Արիմիությանը» հեռացնել առաջնությունից և «ՊԵԿ Արիմիությանը» տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40.000 ՀՀ դրամի չափով:

7. **22.04.2022թ. «Լ. Արցախ-08»-«Գանձասար-Կապան-07» (15B-049) հանդիպման ժամանակ տեղի ունեցած իրադարձության հիման վրա (ոչ սպորտային վարքագիծ):**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Լ. Արցախ-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ Հրայր Ռաֆիկի Աբրահամյանին որակազրկել 2 խաղով և «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

Ուշադրություն՝

Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: